Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավաաություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

4296

I

ՄԱՔՍ ՀԱԼԲԷ

# Ս Ի Ս Տ Ե Մ

II

ՕՍԿԱՐ ՎԻԼԴԷ

# ԵՐՋԱՆԻԿ ԻՇԽԱՆԸ

ԳԵՐՄ. ԹԱՐԳՄ.
Լ. ԲԱԲԱՅԵԱՆ

83
Z-15

ԹԻՖԼԻՍ, 1904 Թ.
Տպարան «ՀԵՐՄԷՍ», Մադաթեան փողոց, № 15.
(33)

83
Z-15
20 OCT 2009
28 JUN 20

I

**ՄԱՔՍ ՀԱԼԲԷ**

# ՍԻՍՏԵՄ

II

**ՕՍԿԱՐ ՎԻԼԴԷ**

# ԵՐՋԱՆԻԿ ԻՇԽԱՆԸ

(Արտատպած «ՄՇԱԿ» լրագրից)

ԳԵՐՄ. ԹԱՐԳՄ.
Լ. ԲԱԲԱՅԵԱՆ

ԹԻՖԼԻՍ, 1904 Թ.
Տպարան «ՀԵՐՄԷՍ», Մադաթեան փողոց, № 15.
(33)

29.05.2013

Дозволено цензурою, Тифлисъ, 27-го іюля, 1904 г.

# ՍԻՍՏԵՄ

(Մախս Հալբէ *)

—Տեսնո՞ւմ էք, ես ապրում եմ միայն հետաքրքրութեան համար և ցանկանում եմ իմանալ, թէ ապագայում ինչ պէտք է լինի։ Ի հարկէ երեխաներիս համար էլ եմ… Հակառակ դէպքում, հաւատացնում եմ ձեզ, եթէ ես հէնց այս րոպէին այստեղ ընկնէի և մեռնէի, դրանից էլ լաւ բան չէր լինի։ Ես ձգտում եմ միայն հանգստութեան, բացարձակ հանգստութեան, իսկ այդ բանին կարելի է հասնել միայն այնտեղ… այն աշխարհում։ Դրանում բոլորովին համոզված եմ։ Այո՛, ես այդ գիտեմ։ Ձե՞ք հաւատում ինձ։

—Օ՜հ, անկասկած, պարոն Հայն։ Ես

*) Գերմանացի նշանաւոր դրամատուրգ, որ գլխաւորապէս հռչակ ստացաւ իր «Jugend» (Երիտասարդութիւն) դրամայով։

ինքս... ես ձեզ հետ բոլորովին համաձայն եմ և համոզված այդ բանի մէջ։ Դուք, ի հարկէ, իմանում էք...

—Այո՛, ես այդ իմանում եմ։ Փորձն ինձ արդէն ցոյց է տուել։ Բացի դրանից... ես չեմ ցանկանում ոչ մի բանի մասին մըտածել։ Միակ բանը, որ դեռ ինձ պահպանում է, այդ այն է, որ այնտեղ, այն աշխարհում ոչ մի բանի մասին այլ ևս չը պէտք է մտածել։ Եթէ ոչ, սարսափելի կը լինէր մի անգամ էլ... բայց ո՛չ, այդ բանը չի լինի։ Ապագան ինձ միշտ հետաքրքրում է։ Մի խօսքով հետաքրքրութիւն և միմիայն հետաքրքրութիւն։

Պարոն Հայնը սովորական ձայնով էր խօսում և նրա մեղմ ձայնը դողում էր։ Մենք քայլում էինք մթութեան մէջ։ Նա իր աջ ձեռքով ձեռնափայտը բարձրացնում և զարկում էր փողոցի քարերին և մի տեսակ մեղմ մետաղային ձայն էր առաջացնում։ Մենք բաւական երկար ժամանակ լռութիւն էինք պահպանում։

Մի ինչ որ ներքին ձայն ականջիս շըշընջում էր մարդկութեան տանջանքների և աննպատակ գոյութեան մասին. իսկ ձեռնափայտի մետաղային ձայնը և մեր քայլերի աղմուկը իմ մտքերիս հետ ներդաշնակութիւն էին պահպանում։ Ես կողմնակի



կերպով նայեցի ուղեկցիս վրա։ Նրա կարծիքով կեանքն անմիտ և անօգուտ բան էր և այդ կարծիքը նրա համար մի անվիճելի, հասկանալի, անհրաժեշտ և բնական ճշմարտութիւն էր։ Նա կեանքի մասին իր կազմած հասկացողութիւնն արտայայտում էր հատուկտոր փրազներով, ճիշդ այն յոգնած մարդու նման, որ ամեն բանի անտարբերութեամբ է վերաբերվում։

Բայց ես... ես կեանքից դեռ շատ բան էի սպասում։ Կեանքն ինձ համար դեռ ժըպտում էր։ Ես ինձ դեռ թարմ և երիտասարդ էի համարում ուղեկցիս հետ համեմատած, որին կեանքն արդէն զզուեցրել էր, չը նայելով որ նրա երեսուն տարին հազիւ էր լըրացել։

Մի ինչ որ զգացմունք սկսեց ինձ ճընշել... Փողոցների լապտերները աղօտ լուսաւորում էին խմբով, զոյգ-զոյգ և մենակ անցուդարձ անող մարդկանց դէմքերը։ Մեր կողքով անցաւ մարդկանցով լցված ձիաքարշը։ Ամեն տեղ խօսում ու ծիծաղում էին։ Բայց մենք դեռ քայլում և լուռ էինք։

Աշխարհային ունայնութիւնը ինձ վրա ճնշող տպաւորութիւն էր թողնում և մի ներքին ձայն ասում էր ինձ. «ինչո՞ւ քեզ համար խորթ է այդ մարդկանց ուրախութիւնը. ինչո՞ւ դու կեանքի քաղցրութեան

համը չես ճաշակում և բաղդաւորութեան րօպէներով զուարճանում։ Ի՞նչ ես ցանկանում դու և ի՞նչ փնտռում»։ Ես կրճատցրի տատամներս, կռւելով ինձ ճնշող ծանր մըտքերի հետ։

Վերջապէս մենք հասանք մի բարձրաւանդակ, որտեղից երևում էր կարմիր, կանաչ, կապոյտ և սպիտակ լապտերներով շըրջապատված երկաթուղու ճանապարհը։ Այդ անթիւ լապտերները կրակի ծով էին ներկայացնում... Երկաթուղու գնացքի ձայնը տարածվում էր օդում։ Մի խօսքով պողպատեայ ըէլսերի վրա կեանքն եռում էր։

Յանկարծ ուղեկիցս ընդհատեց իր լըռութիւնը և սկսեց ինձ պատմել այն բաղմաթիւ միջոցների մասին, որոնց շնորհիւ նա պահպանել է իր գոյութիւնը։ Բացի դըրանից նա շեշտեց այն խոչընդոտ հանգամանքների մասին, որոնք նրան մանկութիւնից ի վեր մինչև այժմ հալածել էին։

Սկզբում նա շատ դանդաղ էր պատմում, յետոյ արագ ու կենդանի, նրա մեղմ ձայնը դողում էր և վկայում էր նրա ներքին յուզմունքը և անասելի տանջանքը, որ պատճառում էին նրան իր արտասանած խօսքերը։

—Տեսնո՞ւմ էք, բարեկամ, որ ես մանկութիւնից ի վեր զանազան փորձերի եմ



ենթարկվել։ Սկզբում իմ մասին հոգ է տարել հայրս, ուսուցիչս, իսկ յետոյ կեանքը... Վերջին փորձը ամենից դաժան է եղել։ Գիտե՞ք, քի՞չ էր մնում աստուածարան դառնայի։

—Դուք աստուածարա՞ն։ Չէ՛ կարող լինել։ Դո՞ւք։

—Այո, ես... ես Դարմշտադի գիմնազիայում էի սովորում։ Հայրս, որ Հօլլանդիայում օֆիցէր էր, ցանկանում էր ինձ «գործունեայ մարդ» և «հասարակութեան նեցուկ» դարձնել և դրանով ինքը փառաւոր անուն վաստակել։ Գուցէ նա ցանկանում էր ինձ պալատական քարոզիչ դարձնել։ Այն ժամանակ ես դեռ ջահիլ էի և դժբաղդաբար առաջ չը գնացի։ Ես չէի կարողանում յունարէն լեզուն տիրապետել և նրա բառերի բերան անելուն ընտելանալ։ Ա՜խ, այն կանօննե՜րը։ Երբ ես քերականական կանօնների մասին մտածում եմ։ Այդ բանն ինձ համար անտանելի և դժուար էր։ Ես յաճախ ընդհարումներ էի ունենում ուսուցիչներիս և հօրս հետ և վերջապէս բանն այնտեղ հասաւ, որ ես մի անգամ ապտակ տուեցի ուսուցչիս, որ ինձ համբերութիւնից արդէն հանել էր։

Այդ ժամանակ ես վեցերորդ դասարանումն էի։ Գիմնազիայից վռնդեցին ինձ, որի

հետևանքն այն եղաւ, որ ես վերջնականապէս հրաժարվեցի աստուածաբան կամ պալատական քարոզիչ դառնալու մտքից։ Հօրս հետ սարսափելի կերպով ընդհարվելուց յետոյ, ես պէտք է օֆիցէր դառնայի։ Այնուհետև մտայ զինւորական նախապատրաստական դպրոցը, բայց այնտեղից էլ բան դուրս չեկաւ։ Ես սարսափելի յամառ էի։ Օֆիցէր դառնալու միտքը ժպտում էր ինձ, որովհետև ես մինչև ուղեղիս ոսկորներն խինկեր էի։ Ամբողջ օրը ձիու վրա, տանից դուրս, այդ բանն ինձ մեծ բաւականութիւն կը պատճառէր։

Ես ոչ մի ցանկութիւն չունէի սովորելու և ատում էի այն ամենը, ինչ որ ինձ գիրքն էր յիշեցնում։ Ես ընդհանրապէս ձեռքըս գիրք չէի առնում և հէնց դրա համար էլ չէի առաջադիմում։ Ա՜խ, եթէ այդ ժամանակ ինձ մէկը մի գործնական բան սովորեցնէր։

Այդ բոլորը դեռ քիչ էին հօրս համար։ Նա ցանկանում էր ինձ իր վերջին փորձին էլ ենթարկել և դրա համար ինձ մտցրեց Հաննօվէրի զինւորական դպրոցը։ Մինչև այժմ ինձ յայտնի չէ, թէ նա դրանով ի՞նչ էր ուզում անել կամ ի՞նչ էր մտածում։ Վերջապէս ես պէտք է արքունական շտալմայստէրի պաշտօն ձեռք բերէի․ բայց այդ մըտ-



քին էլ շուտով վերջ տրվեց։ Բանից դուրս եկաւ, որ ինձ համար դժուար էր շտալմայստէրի պաշտօն ձեռք բերել, որովհետև միայն օֆիցէրին էին տալիս այդ պաշտօնը։ Այդ վերջին և անաջող փորձից յետոյ վերջապէս ես պէտք է գործնական մարդ դառնայի…

Ես այն ժամանակ տասնևինը տարեկան էի։ Հեսսէնում ապրում էր մեր ազգական կալուածատէրը, որի մօտ ուղարկեցին ինձ։ Իմ պարտականութիւնս էր հսկել նրա ծառայողների վրա, ուրեմն, ինչպէս տեսնում էք, ես պէտք է կառավարչի դեր կատարէի։ Այդպիսով յանկարծ գիւղացի դարձայ։

Ազգականս բաւական լաւ մարդ էր, բայց ազատ ժամանակ չունենալու պատճառով ինձ վրա բոլորովին ուշադրութիւն չէր դարձնում։ Մենք միմեանց պատահում կամ տեսնում էինք միայն ճաշի ժամանակ, այն էլ շատ սակաւ։ Իսկապէս մենք միմեանց հետ ոչ մի յարաբերութիւն չունէինք, դրա համար էլ ես միայն ինձ էի յանձնված և հետևաբար ոչնչով չէի պարապում։ Ոչ շըրջապատող մարդիկն էին ինձ հասկանում և ոչ էլ ես նրանց։ Այնտեղ բացի ինձանից երկու ուրիշ ծառայողներ էլ կային, որոնց հետ էլ ես չը կարողացայ յարմարվել, որովհետև սարսափելի մարդ էի (գոնէ ինձ

այդպէս էր թւում)։ Թէ ես ինչպէս էի այն ժամանակ նայում կեանքի վրա, այժմ ինքս էլ չեմ հաւատում...

Հէնց այդ ժամանակ ես ծանօթացայ ապագայ կնոջս հետ։ Նա կալուածի տնտեսուհին էր և մենք ամեն օր միմեանց պատահում էինք։ Նա ինձ համար միակ կենդանի արարածն էր, որ տասնևեօթը տարեկան էր, իսկ ես քսան տարեկան։ Ինչպիսի՜ ազգային հագուստ ունէր նա։ Ես իսկապէս նրա հագուստի վրա էի սիրահարուել։ Ծիծաղո՞ւմ էք դուք։

—Օ՜հ ոչ, ես այդ բանը շատ լաւ եմ հասկանում ու երևակայում և ուրախ եմ, որ դուք այդ բոլորը մի տեսակ անտարբեր տոնով էք պատմում։ Կարծէք ձեզ հետ ոչինչ չէ պատահել։ Բայց, խնդրեմ շարունակեցէք...

—Այո, ես էլ հէնց այն ժամանակ ամեն բանի անտարբեր էի վերաբերւում։ Մենք արդէն նշանուած էինք և ցանկանում էինք շուտով ամուսնանալ։ Երբ ես ամուսնութեանս մասին հօրս գրեցի, դրանից մի ահագին պատմութիւն դուրս եկաւ։ Ես վրճռեցի համարձակ կերպով դիմադրել ինձ ըսպառնացող արգելքներին։ Եթէ մէկն այն ժամանակ իմ ուշադրութիւնը դարձնէր այն բանի վրա, որ իմ արած քայլս շատ յան-



դուգն էր և մենք ապրելու համար ոչինչ չը պէտք է ունենայինք, գուցէ բանը ուրիշ կերպ կարգադրէի։ Բայց դուք հօրս չէք ճանաչում։ Նա խորհուրդ տալ կամ համոզել չը գիտէր, բացի ակնարկներից և անէծքներից։

Երևակայեցէք իմ և ապագայ կնոջս դրութիւնը։ Մենք պէտք է զրկվէինք ժառանգութիւնից և հալածանքների ու սպառնալիքների ենթարկվէինք։ Այդ բոլոր բաներն ինձ վրա սարսափելի տպաւորութիւն էին թողնում, բայց այնուամենայնիւ ես աշխատում էի ասածս առաջ տանել։ Շուտով իմ մէջ յղացաւ Ամերիկա գնալու միտքը և այն էլ պայծառ գոյներով։ Կինս ինձ հետ բոլորովին համաձայն էր և մենք շուտով ճանապարհվեցինք Ամերիկա, որտեղ և ամուսնացանք։ Հայրս անիծեց ինձ և օրինական վաւերագրերով զրկեց ժառանգութիւնից։ Ես այդ բոլոր բաներին անտարբեր կերպով վերաբերվեցի և հօրս հետ յարաբերութիւնս վերջնականապէս կտրեցի։

Եւ այդ վաւերագրերը մնո՞ւմ են մինչև այժմ, հարցրի ես։

—Ո՛չ իմ վերադարձից յետոյ ոչնչացրին։ Ամերիկայում ես ոչ թէ կորայ, այլ և մինչև անգամ փողով հայրենիք վերադարձայ։ Իմ ունեցած աջողութիւնը հօրս դուր

եկաւ։ Այդպիսի մարդկանց միայն աջողութիւնն է կուրացնում և գրաւում։ Այնուհետև մեր լարված յարաբերութիւնը լաւացաւ և հայրս դուրս եկաւ ինձ դիմաւորելու։ Բայց մենք միմեանց համար արդէն օտարացել էինք։ Հօրս շատ քաջ յայտնի էր իմ կարծիքը իր մասին։ Սէր դէպի ծնողները այդ, իմ կարծիքով, մի նախապաշարմունք է։ Ես հայրական սէր չեմ ընդունում, այլ միայն ճանաչում եմ ընդհանուր սէրը դէպի մարդը, գուցէ և մայրական սէր էլ։ Կարելի է... Ինձ համար մինչև այժմ դեռ պարզ չէ, չը լինի՞ այդ զգացմունքն էլ եսասիրութիւն է։ Իսկ մնացած սէրը բոլորովին նախապաշարմունք է։

Այո՛, նախապաշարմունք։ Հէնց այդպիսի նախապաշարմունքներով էլ ես գնացի Ամերիկա։ Դուք չէք կարող հաւատալ, թէ ես որքան տհաճութիւնների ենթարկվեցի այդօրինակ նախապաշարմունքների շնորհիւ։ Այժմ այդ բանն ինձ համար շատ պարզ է։ Երբ ես նորից մտածում եմ գլխովս անցածների մասին, զարմանում եմ, որ մինչև այժըմ չեմ խորտակվել։ Բայց թող խոստովանք լինի, երկու անգամ քիչ էր մնում խորտակվէի։

Սկզբում ես մի սափրիչանոց բաց արի։ Երևակայեցէք օտար քաղաքում սափրիչանոց։



Մենք վերջնականապէս հաստատվեցինք Նիւ-Եօրքում։ Ոչ ես և ոչ էլ կինս անգլիերէն չը գիտէինք։ Հայրս ուրախացել էր ինձանից բաժանվելով և դրա համար ինձ հինգ հարիւր դոլլար ճանապարհածախս էր տուել։ Ի հարկէ, այդ փողը ծախսեցինք։ Երեք ամիս անցնելուց յետոյ մեզ մօտ ոչ մի գրօշ էլ չը մնաց և հետևաբար մեր դրութիւնը անտանելի դարձաւ։ Սկզբում մենք դեռ եւրօպացիներ էինք, իսկ յետոյ... յետոյ...

Ուղեկիցս իր կրծքի խորին անկիւնից հառաչեց։ Մենք մի քանի րոպէ լուռ մնացինք, բայց յետոյ ուղեկիցս էլի իր մեղմ ձայնով մեր լռութիւնը ընդհատեց և շարունակեց։

—Ես արդէն գիտէի, թէ ի՞նչ է նշանակում պրօլետար և արդէն փորձել էի, որ աշխարհումս ամէն ինչ հետզհետէ կերպարանափոխվում է։ Երբ ես երեկոները աշխատելուց յետոյ տուն էի վերադառնում, կինս ամենից առաջ սեղանը ծածկում էր մաքուր սփռոցով և նրա վրա շարում էր մաքուր պնակներ, դանակներ և պատառաքաղներ։ Մեզ մօտ ամէն ինչ պէտք է կանօնաւոր լինէր, հակառակ դէպքում մենք մեզ վատ էինք զգում։ Բայց սպիտակ սփռոցը շուտով փոխվեց կլիօնկայի, իսկ յետոյ նա

էլ անհետացաւ։ Այնուհետեւ մենք ճաշում էինք մերկ սեղանի վրա մի ամանից և ես ագահութեամբ գցում էի գդալս նրա մէջ։ Երբ մարդս ամբողջ օրը աշխատում է, նա ամենայն հեշտութեամբ մոռանում է զանազան տեսակ ձևականութիւնները և ամեն բանի անտարբերութեամբ է վերաբերվում, միայն թէ կշտանայ, այո, կշտանայ...

Կշտանալուց յետոյ ես գնում էի հաբեան սենեակը և այնտեղի մահճակալի վրա պառկում։ Երբեմն էլ ծխում և գերմանական լրագիր էի կարդում։

Բայց շուտով այդ էլ վերջացաւ։ Հէնց որ ես պառկում, իսկոյն քնում էի մինչև առաւօտ և այդ բանը ինձ հետ ամեն օր էր պատահում։ Ես հէնց այն ժամանակ հասկացայ, թէ ինչ է նշանակում կեանքը։ Մի բան հասկանալու համար հարկաւոր է ամենից առաջ փորձվել... Ոչ մի յոյս չունէի, որ կեանքս մի քիչ կարող էր փոխվել։ Բայց միշտ էլ աղքատ մնալ, այդ միտքն ինձ վրա սարսափ էր ազդում...

—Այո, սարսափելի է, հաստատեցի ես, բայց յետո՞յ ինչով էիք զբաղվում դուք։

—Սկզբում ես յատակներ էի սրբում, բայց շատ չնչին փող էի ստանում, որովհետև յատակներ սրբողներին շատ վատ էին վարձատրում։ Ինչ էր մնում ինձ այլ ես



անել։ Ուրիշ բան էլ չէի կարող անել։ Յատակ սրբելու համար ոչ մի ընդունակութիւն չէր հարկաւոր։ Ես ինձ բաղդաւոր էի համարում, որ գոնէ ինձ աջողվեց այդ զբաղմունքը։ Զէ՞ որ ես մի անգործնական մարդ էի... Ինձ համար սարսափելի ծանր էր։ Երևակայեցէք և լեզու չիմանալ։ Այդ բոլոր պարագաները ինձ սաստիկ խանգարում էին։ Դրանք իմ ստացած կրթութեան պտուղներն էին։ Սակայն հետզհետէ սկսեց ամեն ինչ փոխուել։

Ես ստիպուած էի այրուբենից սկսել և հետըզհետէ առաջ գնալ, չը նայելով, որ բաւական դանդաղաշարժ մարդ էի և տանելով տանում էի այդ ամբողջ սխալները, մարդկանց անմիտ մրցումն ու փոխադարձ խաբեբայութիւնները։ Դրանք ինձ տանջում և գրգռում էին...

Ես բոլոր ոյժերովս դիմադրում էի մինչև այն ժամանակ, երբ դրութիւնս դեռ սարսափելի չէր դարձել։

Կեանքի կռուի մէջ կամ պէտք է խորտակվէի կամ թէ չէ՝ ուրիշների դրութեան հասնէի։ Յատակ սրբելուց ստացած ռոճիկս ապրելու համար անգամ չէր բաւականանում։

Շուտով կինս աղախնի պաշտօն ստացաւ, բայց դրանից էլ բան չը պէտք է դուրս գար։ Մենք արդէն երեխայ ունէինք և քիչ

էր մնում խորտակվէինք, երբ ես արդէն մի նոր բան էլ սովորեցի։ Մի անգամ ինքս ասացի ինձ. «Արի մի փորձ էլ արա, եթէ այդ էլ չի աջողվի, այն ժամանակ բանդ բուրդ է»...

Ես իմանում էի, որ լաք քսելը լաւ էր վարձատրվում։ Այդ ժամանակ մի շարք նոր շինութիւններ էին շինում և լաք քսողների մեծ պահանջ կար։ Գիտէ՞ք, խօսքս պատուհաններ և դռներ ներկելու մասին է և այդ արհեստի մասին ես ոչ մի գաղափար և հասկացողութիւն չունէի։ Բայց ինչո՞ւ այդ արհեստը ուրիշների պէս չը սովորել։ Դուք արդէն տեսնում էք, որ ես սկսել էի նոր պայմաններին յարմարվել։ Ես գնացի մի գերմանացի կեղեքիչ ձեռնարկողի մօտ և հարցրի նրան, թէ արդեօք չե՞մ կարող իր մօտ լաք քսողի տեղ ստանալ։

—Դուք այդ արհեստով ուրիշների մօտ պարապե՞լ էք, հարցրեց նա։

—Ի հարկէ, պատասխանեցի ես, հակառակ դէպքում չէի գալ ձեզ մօտ։

—Ո՞րտեղ էք աշխատել, հարցրեց նա։

Ես թուեցի մի քանի տեղեր, հաստատ համոզված լինելով, որ գերմանացին չէր ստուգիլ։

—Ո՞րքանով կաշխատէք դուք, շարունակեց նա։



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

—Շաբաթական եօթը դոլլար, պատասխանեցի ես։

—Լա՛ւ, ընդունում եմ այդ պայմանով, բայց եթէ չը կարողանաք լաւ աշխատել, ես ձեզ կը վռնդեմ։

—Ի հարկէ, ասացի ես դուրս գնալով։ Այդպիսով նոր տեղ ձեռք բերի և հետևեալ առաւօտը գնացի աշխատելու։ Սկզբում ես նայեցի, թէ ուրիշներն ինչպէս են աշխատում և յետոյ ես էլ սկսեցի աշխատել։

Այսպէս թէ այնպէս, գործը առաջ էր գնում։

Ինձ մօտ կանգնել էր մի վերակացու, որ հսկում էր բոլոր աշխատողների վրա։ Ես նրան իսկոյն կաշառեցի և խոստացայ մի քանի շաբաթվայ ընթացքում ռոճիկիս կէսը տալ նրան և դրա համար նա ինձ լաք քսելու վերաբերեալ բոլոր բաները սովորեցրեց։

Այդ գործի մէջ ոչ մի դժուար բան չը կար և երկու շաբաթից յետոյ ես այնպէս լաւ էի լաք քսում, որ կարծես թէ առաջներում բացի այդ արհեստից ուրիշ ոչ մի գործով չեմ պարապել։

Գերմանացու մօտ բաւական երկար մնացի։ Սկզբում ամեն օր կարծում էի, թէ ինձ աշխատանքից կը հրաժարեցնեն։

Ամեն երեկոյ, երբ մենք պատրաստ-

վում էինք տուն գնալու, գերմանացին մի[...]
կանգնում էր տան դռան մոտ և անպէ[...]
վարձկաններին արձակում էր։ Ամերիկա[...]
յում մարդկանց աշխատանքից հրաժարել[...]
համար որոշ ժամանակ չը կայ։ Դուք [...]
մենևին չը գիտէք, թէ վաղը կարող էք փ[...]
ղոցում լինել։ Գիտէ՞ք, այդ էլ է սիստե[...]
մէջ մտնում։ Մարդկանց կատարեալ ազ[...]
տութիւն են տալիս սովից մեռնելու։ Ա[...]
բանն ունի և իր լաւ կողմը։ Երբ մարդո[...]
դուր չէ գալիս, կարող է դուրս գնա[...]
Մարդս գոնէ կապուած չէ։

Գերմանացին կանգնած էր դռան մ[...]
և մատներով ցոյց էր տալիս. «դուք այլ[...]
հարկաւոր չէք, դուք էլ, դուք էլ»։

Բայց նա ինձ մատնացոյց չէր անո[...]
և այդ բանն ինձ բաւական քաջալերում է[...]

Ուրեմն դու հասկանում ես գործդ, [...]
քեզ չեն արձակում, մտածում էի ես։

Այդ բանն ինձ բոլորովին զարմացրի[...]
Ես ինքնավստահ դարձայ, շատ էի խոր[...]
սուզվում սիստեմի մէջ, վճռեցի ուրիշնե[...]
նման վարվել և ինքս ինձ ասացի. «դ[...]
պէտք է կամ կոխ տաս կամ թէ չէ ք[...]
կոխ կը տան»։ Ինձ այլ ևս ուրիշ բան չ[...]
մնում անելու։ Ես ինքս խորը տանջվում է[...]
երբ ինձ պատահում էր մի որ և է աղք[...]
տի մի կողմը վանել, այնպիսի աղքատի,



ապրելու համար մի և նոյն իրաւունքներն ունէր, ինչ ես։ Բայց Ամերիկայում եղբայրութիւն չը կայ։ Փո՛ղ վաստակել և միայն փո՛ղ վաստակել, ահա թէ ինչ է սիստեմը։ Ամեն բան հիմնված է փոխադարձ որսորդութեան վրա։ Մի մարդ միւսի համար մահացու թշնամի է և այդ թշնամուն ամեն քայլափոխում աշխատում է ոչնչացնել։ Սկզբում ինձ թւում էր, որ կը խելագարվէի։ բայց յետոյ երևաց, որ ես այդ բոլոր խոչընդոտ հանգամանքներին արդէն յաղթել եմ։ Այդ որսորդութիւնը մինչև անգամ ինձ դուր եկաւ։ Ժամանակի ընթացքում ես աւելի ինքնավստահ դարձայ և մինչև անգամ պահանջեցի ռոճիկս աւելացնել և յիրաւի հասայ նպատակիս։ Սկզբում ես միայն աշխատում էի ուրիշներին լաւ երևալ, բայց յետոյ բնաւորութիւնս փոխվեց։ Յետոյ սկըսեցի ցոյց տալ, որ ես ամեն բան հասկանում եմ և եկայ այն համոզմունքին, որ աջողութիւն ունենալու համար պէտք է միայն անամօթ լինել։ Ինչպէս տեսնում էք, ճանապարհս արդէն հարթուած էր։ Շուտով ես հեռացայ տիրոջիցս և գնացի նրա մըրցակիցներից մէկի մոտ, որ վաղուց էր ցանկանում ինձ իր մոտ տանել։ Այդ բանը արդէն վճռական, թէկուզ ստորացուցիչ քայլ էր իմ կողմից, բայց ես ստիպուած էի այդ-

պէս վարվելու, որպէս գի առաջադիմ էի: Դու
արդէն տեսնում էք, որ ես ամբողջապէ
մտել էի միտեմի մէջ և մինչև անգամ ու
րիշներից երբեմն գերազանցում էի:

Դոներին սովորաբար երկու անգամ էին
լաք քսում, չը նայելով որ նրանք իրանց խ
կական փայլը տանում էին երրորդ ան
գամ քսելուց յետոյ: Ցերեկը մենք դրա հա
մար ժամանակ չունէինք, որովհետև չէին
կարողանում աշխատանքը վերջացնել: Ե
գիշերը գնում էի այնտեղ և իմ մասը եր
րորդ անգամ լաք էի քսում: Հետևեալ օր
տիրոջս ցոյց էի տալիս աշխատանքս և ա
սում էի նրան. «Տեսէք ինչպէս լաւ է. ու
րիշների աշխատանքի հետ չէ կարելի հա
մեմատել»: Տարբերութիւնը, ի հարկէ, ի
կոյն աչքի էր ընկնում: Ոչ ոք գաղափա
չունէր, որ ես գիշերներն էլ եմ աշխատու
և ֆիզիքապէս սաստիկ քայքայվում, բայ
այդ բանը մեծ օգուտ տուեց ինձ: Վերջա
պէս ես վարպետ դարձայ: Ամենադժուա
բանին յաղթել էի և արդէն փող էի տնտե
սում...

—Իսկ ձեր կինը՞, հարցրի ես:

—Կինս, այո... այդ ամենավատն է
Բայց ես ձեզ ամենագլխաւոր բանը դ
չեմ պատմել...

Սկզբում մեր յարաբերութիւնը դ



տանելի էր: Ես, ի հարկէ, իսկոյն տեսայ,
որ այդ բոլորը այնպէս չէր, ինչպէս ես էի
երևակայում: Նիւ-Եօրքում ամէն ինչ ուրիշ
կերպարանք ունէր, քան թէ Հեսսէնում,
հօրեղբորս կալուածքում:

Կինս, ի հարկէ, կրթված չէր, իբրև
հասարակ գիւղացիների զաւակ: Բայց կա-
նայք զանազան հանգամանքների հետ յար-
մարվելու մի առանձին ընդունակութիւն
ունենի: Նա, ի հարկէ, շուտով արտաքուստ
հաշտուեց մեր նոր պայմանների հետ: Քանի
որ կինս առողջ էր, ամէն ինչ էլ կարգին
էր գնում: Առաջին տարիները մեր ապրուս-
տը տանելի էր և ես ամէն անգամ մեղա-
ւորը ինձ էի համարում մեզ հետ պատահող
տհաճութիւնների համար և հասկանում էի,
որ այդ օրինակ կեանքը կնոջս համար շատ
ծանր պէտք է լինէր: Նրան էլ ամէն ինչ
ուրիշ գոյնով էր երևում: Մենք արդէն մի
երեխայ ունէինք, իսկ երկրորդը շուտով
պէտք է ծնվէր:

Պատահում էր, որ ես երկար ժամա-
նակ առանց աշխատանքի թափառում էի:
Այն ժամանակ ամէն տեղ ճգնաժամ էր և
մենք հազարներով անգործ էինք: Օ՜հ, սար-
սափելի՜ էր այն ժամանակը: Ոչ մի մխի-
թարական բան չը կար: Իմ տնտեսած մի
քանի դոլլարներն էլ արդէն ծախսել էինք,

իսկ այժմ հարկաւոր էր և տան վարձը վճարել։ Ես անելանելի դրութեան մէջ էի գտնվում և դրա համար վճռեցի կահկարասիք գնել, փողը յետոյ վճարելու պայմանով։ Այդ կահկարասիքը վաճառեցի և մի առ ժամանակ օգտվեցի դրանից ստացած փողով։ Ես յոյս ունէի մինչև կահկարասիքի փողի վճարման ժամանակը մի բան աշխատել։ Ուրիշ կերպ չէի կարող վարվել, եթէ ո մեզ փողոցը կը ձգէին։ Բնակարանի վարձը վճարեցի և այդպիսով մենք կարող էինք սպասել մեր մանկան լոյս աշխարհ գալուն։

Մեր դրութիւնը սարսափելի թշուառ էր։ Կահ կարասիքի տիրոջ հետ հաշիւս դեռ չէի վերջացրել։ Նա շատ սիրալիր մարդ էր և համաձայնեց սպասել, մինչև որ ես մի որ և է աշխատանք կը գտնեմ։ Բայց մեր տանտէրը մեզ բնակարանից դուրս վռնդեց։ Մենք յանկարծ փողոցում էինք գտնվում։ Կինս որ ծնելուց յետոյ արդէն առողջացել և կազդուրվել էր, մտաւ Գերմանիայից գաղթա մի հրէական ընտանիք ծծմօր պաշտօնով իսկ ես... ես էլ գնացի իմ ծանօթ ճաշարանատէրերից մէկի մօտ և մտայ նրա գինետունը։

Ձմեռ էր։ Ես սարսափելի մրսում գրեթէ ոչինչ չէի ուտում։ Այն ժամանա



մինչև անգամ ինքնասպանութեան մասին էի մտածում և քիչ էր մնացել, որ իրականանար այդ, որովհետև ես բոլորովին քայքայվել և լաւ ապագայ ունենալու յոյսս կորել էի։ Ինքս էլ չը գիտեմ, թէ ինչու ես ինքնասպանութիւն չը գործեցի, երևի ընտանիքի գաղափարն էր ինձ յետ կազնեցնում այդ մտքից։ Ես վճռեցի մի անգամ էլ դիմադրել կեանքի ձախորդութիւններին...

Մի անգամ փողոց դուրս գնացի, որտեղ ահագին ամբոխ էր ժողովվել։ Ամբոխի մէջտեղը մի մարդ էր նստել և ձեռով լուսանկարներ էր ընդօրինակում։ Ընդօրինակած լուսանկարներն իսկոյն կարելի էր ստանալ։ Ինձ թուաց, որ ես էլ կարող եմ դրանով պարապել։ Ես գնացի տուն և երկու օր վարժվում էի նկարելով։ Յետոյ սկսեցի փողոցում աշխատել։ Շուտով իմ շուրջը խմբվեցին բաւական մարդիկ և մի քանի ժամանակից յետոյ ես մի համեստ գումար վաստակեցի և կրկին սկսեցի մարդավարի ապրել։ Ես այդ բանը մինչև անգամ չէի երևակայում և թէկուզ մեքենայաբար էի աշխատում, բայց ինչպէս տեսնում էք, բաղդն ինձ արդէն ժպտում էր։ Մի քանի ժամանակից յետոյ ես կրկին ստացայ վարպետութեան նախկին պաշտօնս։ Ճգնաժամը անցաւ և գործերս լաւացան։ Վարպետի

պաշտօնով ես գրեթէ նմանում էի մի փոքրիկ ձեռնարկողի։ Մի քանի խոշոր արդիւնաբերող առևտրական տներ մի շարք տների շինութիւնը յանձնեցին իրանց վարպետներին։ Իւրաքանչիւր տան շինութեան համար յատկացնում էին մի որոշ գումար, որի մէջ մտնում էր բանւորի վարձը, նիւթերի փողը և վարպետների զուտ աշխատանքը։ Իմ եկամուտը միայն խնայողութիւնն էր կազմում։ Հասկանո՞ւմ էք, խնայողութիւն անելու համար հարկաւոր է բանւորների վարձը պակսեցնել և նիւթերն էժան գնով ձեռք բերել... որքան շատ աշխատես, այնքան էլ լաւ կը լինի։ Ժամանակը փող է։ Սկզբում ինձ էին շահագործում, իսկ այժմ էլ ես էի ուրիշներին շահագործում։ Ես միշտ աշխատում էի բանւորների մէջ նախանձ սերմանել. օրինակի համար մօտենում էի մի բանւորի և ասում նրան. «Լսի՛ր, եղբայր, ընկերդ քեզանից աւելի լաւ է աշխատում»։—«Ինչպէ՞ս, մի՞թէ նա ինձանից աւելի լաւ է աշխատում, ոչինչ, ես նրան կը յաղթեմ,» պատասխանում էր բանւորը։ Դրանից յետոյ բանւորը աւելի մեծ եռանդով էր աշխատում և մրցում իր ընկերի հետ։ Այդ բանից, ի հարկէ, թէ մենք և թէ առևտրական տներն էին գլխաւորապէս օգտվում...



Հազար դոլլար աշխատեցի։ Իմ միակ նպատակն էր փող, փող և փող աշխատել։ Ես ապրում էի միայն դոլլարների համար և արդէն ամերիկացի էի դարձել։ Բայց երբեմն էլ խիղճս ինձ տանջում էր, այն էլ շատ հազուագիւտ դէպքերում։ Ես շատ լաւ էի հասկանում, որ այն ամենը, ինչ որ մարդկայնութիւն է համարվում, իմ մէջ կը խլանայ, և որ այդ իսկապէս կեանք չէ։ Այդ բոլոր բաներն ինձ համար պարզ էին, բայց ինչ արած, որ սիստեմն ինձ ամուր բռնել էր և չէի կարող նրանից ազատվել։ Ես կամ պէտք է շարունակէի այդ հոգով ապրել կամ պէտք է ենթարկվէի առաջվայ դրութեանը։ Ես հետզհետէ աւելի խորն էի ընկղմվում և իսկապէս այդ բանի մէջ է կայանում սիստեմի հետևողականութիւնը։ Հետևանքը՝ միլիօնատէր կամ աղքատ։ Այդ բանը վաղօրօք անհնարին է իմանալ։ Մարդս մինչև իր կեանքի վերջին րօպէն չէ կարող նախատեսնել իր բաղդը, իսկ այդ ժամանակի ընթացքումն էլ մարդկային բոլոր զգացմունքները խլանում են։ Դրանք ես շատ լաւ էի հասկանում, բայց դժբաղդաբար ոչինչ չէի կարող անել... Ես միշտ աջողութիւն ունէի։ Վերջապէս մտայ մի գործարան, որտեղ եղնափայտից զանազան գործիքներ էին շինում։ Մենք եղնափայտը սովորական փայ-

տից էինք շինում: Մի անգամ անաջողութիւն պատահեց: Փայտը սպիտակ էր մնացել և այդ բանը մեծ վնաս էր սպառնում: Այն ժամանակ մտածեցի այդ փայտը սպիտակ եղևնափայտի տեղ ծախելու: Տէրս հիացաւ իմ հանճարեղ գիւտից: Գնողները այդ փայտը միմեանց ձեռքից խլում էին: Սպիտակ եղևնափայտ: Երևակայեցէք ինչ հազուագիւտ բան է: Հասարակութիւնը գոհ էր, իսկ մենք էլ, ի հարկէ, աւելի գոհ էինք: Այստեղ արդէն սիստեմը իր ամբողջ փայլով երևում էր: Մեղաւորը մենք չէինք: Ինչու հասարակութիւնը յիմար է...

Շուտով ինձ առաջարկեցին տներ վաճառելու գործակալ դառնալ: Ես տներ շինող մի ֆիրմայում արդէն ռոճկով ծառայում էի: Իմ պարտականութիւնն էր ամէն տեղ գովաբանել նրանց տների արժանաւորութիւնները: Ոչ մի գնողի ես չէի խաբում կամ գայթակղեցնում և արդէն ուսումնասիրել էի մարդկանց վրա ազդելու միջոցները: Հարկաւոր էր միայն նրանց թոյլ երակի հետ խաղալու ընդունակութիւնն ունենալ: Մարդիկ ոչ այլ ինչ են, եթէ ոչ միայն թըւանշաններ, որոնց պէտք է միայն համարել: Ով այդ հաշւի մասին լաւ է մտածում, նա էլ գործը տանում է: Դրա մէջն է կայանում սիստեմի ամբողջ բարոյականութիւ-



նը: Ամէն ինչ նրա շուրջն է պտտւում: Ինչպէս տեսնում էք, «մարդ» գաղափարն այստեղ տեղ չունի: Ախր ինչու համար ունենայ: Միայն թէ փող աշխատել... իսկ ես փող էի աշխատում: Ամէն ինչ լաւ էր գընում, բայց ես ոչ մի գործում բաւականութիւն չէի գտնում: Երբ արդէն տասը տուն ծախեցի, տէրս ինձ առաջարկեց իր հետ ընկերանալ: Հէնց այն օրը, երբ ես մեր պայմանագիրը պէտք է ստորագրէի, կինս մեռաւ:

—Ձեր կի՞նը, հարցրի ես: Ինչպէս պատահեց այդ:

—Այո, վերջին տարիները սարսափելի էին: Ծնելու օրից ի վեր նա միշտ հիւանդ էր: Ես ձեզ արդէն պատմեցի, որ նա ծծմոր պաշտօնով մտաւ մի հրէական ընտանիք: Մի քանի ժամանակից յետոյ նա տենդ ստացաւ, չը կարողացաւ երեխաներին ծիծ տալ և դըրա համար նրան ուղարկեցին հիւանդանոց: Այնուհետև ես ոչինչ չէի կարող անել, որովհետև բոլորովին յուսահատ դրութեան մէջ էի գտնվում:

Կինս տարի ու կէս պառկեց: Նա հիւանդանոցից բոլորովին քայքայված դուրս եկաւ: Երևակայեցէք, որ նա դեռ ևս քսան և մէկ տարեկան էր և բժիշկներն արդէն յայտնել էին, որ նա երբէք չի առողջանալ: Նա կարող էր վաղը մեռնել, բայց կարող էր

և դեռ մի քանի տարի ապրել։ Ոչ մի դրական բան նրա մասին չէր կարելի ասել։ Նրա հիւանդութիւնն առաջ էր եկել ծնելուց և կարիքներից։ Կինս տանջվում էր երիկամունքների անբուժելի հիւանդութեամբ։ Կինս, ինչպէս առհասարակ բոլոր հիւանդները, դիւրագրգիռ և անձնակամ էր, ես այդ բանը չէի կարող տանել և դրա համար սկսեցի նրան հետզհետէ ատել։ Ես չէի կարողանում նայել նրան, երբ նա ուտում էր, մի խօսքով նրան ատում էի և կնոջս ոչ մի շարժուածքը ինձ դուր չէր գալիս։ Բայց ես նրան զգալ չէի տալիս իմ ատելութիւնը, որովհետև նա մեղաւոր չէր։ Երբեմն ցանկանում էի գոռալ և նրան բացատրել իմ ըզգացմունքները, բայց ես միշտ զսպում էի ինձ։

Այդպէս շարունակվեց 4 տարի։ Ես հետզհետէ ընտելացայ և հաշտվեցի իմ դրութեան հետ և այլ ևս կարիք չէի զգում իմ զգացմունքս արտայայտելու։ Իմ մէջ ամեն ինչ մեռել էր և իմ միակ մխիթարութիւնը երեխաներս էին կազմում։ Ես այլ ևս ոչ մի կամք կամ ցանկութիւն չունէի և դոլլարներըն էլ ինձ բաւականութիւն չէին պատճառում։

Կինս քսան և հինգ տարեկան հասակում մեռաւ և բոլորովին գաղափար չունէր,



թէ ես վերջին տարիները ինչպիսի զգացմունքով էի ապրում նրա հետ։ Այդ բանը նրա համար յաւիտենական գաղտնիք մնաց…

—Յետոյ ինչպէս վերադարձաք դուք, հարցրի ես, մի քիչ լռելուց յետոյ։

—Այո, ինչպէս ես ձեզ արդէն ասացի, պէտք է պայմանագիրը ստորագրէի տիրոջս հետ ընկերանալու համար։ Իմ առաջ միայն երկու ճանապարհ կար։ Կամ պէտք է Ամերիկայում մնայի, կամ վերադառնայի Գերմանիա։ Ամերիկայում մնալ, այդ նշանակում էր կրկին ռիսկ անել, որովհետև այնտեղ մարդս միւս օրվայ համար անգամ յոյս չունի։ Ես պէտք է վերջնականապէս ամերիկացի դառնայի։ Եթէ իմ մէջ դեռ մարդկային որևէ բան էր մնացել, այդ բոլորը պէտք է վերջնականապէս կորցնէի։ Բայց յանկարծ իմ մէջ ամեն ինչ զարթնեց և ես վճռեցի երեխաներս Գերմանիայում կրթելու։

Ես հաստատ վճռեցի թողնել Ամերիկան և ահա արդէն Գերմանիայումն եմ, որտեղ մարդս աւելի լաւ է ապրում։ Իմ կարողութիւնն այնքան մեծ չէ, որովհետև Ամերիկայում քիչ մնացի։ Ես կարող էի այնտեղ հարստութիւն դիզել, բայց կարող էի և աղքատանալ։ Ես այնքան կարողութիւն ունեմ, որ դրանով երեխաներս կարող են կրթվել և գուցէ մի քանի տարի էլ ապրել։

Իսկ յետոյ... ամէն ինչ կը վերջանայ և այնուհետև հարկաւոր էլ չէ աւելի ապրել։

—Միթէ դուք կեանքից ուրիշ աւելի բան չէ՞ք սպասում։

—Ո՛չ, սիստեմն ինձ արդէն մեռցրել է և ես ամէն բանից զզուել եմ։ Ա՜խ, այդ սարսափելի սիստեմը...

Նա ձեռքս ամուր սեղմելով գլխակոր հեռացաւ։ Ես դեռ երկար կանգնեցի և նայեցի այդ մարմնով ու հոգով ջարդված մարդու ետևից մինչև այն ժամանակ, երբ նրա կերպարանքը մթութեան մէջ բոլորովին անյայտացաւ։

---

# ԵՐՋԱՆԻԿ ԻՇԽԱՆԸ

(Օսկար Վիլդէի *)

—

Քաղաքի տներից շատ բարձր, մի երկար ու բարակ կոթողի վրա շինված էր երջանիկ իշխանի արձանը։ Նա ծածկված էր նուրբ ոսկուց պատրաստած բարակ շերտով, նրա աչքերը երկու պայծառ շափիւղներից էին շինված, իսկ նրա սրի ճարմանդում հըրհրատում էր մի մեծ և կարմիր սուտակ։

Երջանիկ իշխանի արձանը մարդկանց արտասովոր զարմանք էր պատճառում։

—Դա ոսկի աքաղաղի պէս գեղեցիկ է, նկատեց քաղաքային ձայնաւորներից մի պարոն, որ միշտ պարծենում էր իր գեղար-

*) Արևմտեան Եւրոպայում նշանաւոր գրողի հռչակ վայելող Օսկար Վիլդէի վերոյիշեալ այլաբանական հեքիաթը զետեղված էր գերմանական ամենանշանաւոր լրագիր „Frankfurter Zeitung“-ի մէջ։ Մինչև այժմ, որքան մեզ յայտնի է, Վիլդէից դեռ ոչինչ չէ թարգմանվել հայերէն։ Ծ. Թ.,

ուեստական ճաշակով. միայն այնքան էլ օգտակար չէ, աւելացրեց նա երկիւղից, մարդիկ պէտք է նրան անգործնական համարեն, մինչդեռ երջանիկ իշխանն իսկապէս այդպիսի մարդ չէր։

—Ինչո՞ւ դու էլ երջանիկ իշխանի նման չես, հարցնում էր մի խելացի մայր իր փոքրիկ զաւակին, որ ցանկանում էր երկիրըս երկինք դարձնել։ Երջանիկ իշխանը ոչ մի բանի կարիք չէր զգում։

—Ես ուրախ եմ, որ այս աշխարհում գոնէ մէկը կայ, որ բոլորովին երջանիկ է, մրթմրթաց մի հիասթափված մարդ, երբ նա հրաշալի արձանին նայեց։

—Նա հրեշտակի պէս է երևում, ասում էին աղքատների դպրոցի երեխաները, երբ նրանք իրանց բաց կարմիր զգեստները և մաքուր վերարկուները հագած եկեղեցուց վերադառնում էին։

—Ի՞նչ էք կարծում, այդպիսի բան տեսե՞լ էք, հարցնում էր թուաբանութեան ուսուցիչը։

—Ի հարկէ, բայց միայն մեր երազներում, պատասխանում էին աշակերտները. իսկ ուսուցիչը ճակատը կնճռում և նրանց խիստ նայում էր, որովհետև նրան դուր չէր գալիս այն բանը, որ երեխաներն երազներ էլ էին տեսնում...



Մի գիշեր քաղաքի վրայով թռչում էր մի փոքրիկ տարմահաւ։ Վեց շաբաթ առաջ նրա ընկերները արդէն Եգիպտոս էին գնացել, իսկ նա յետ էր մնացել, որովհետև սիրահարված էր մի շատ գեղեցիկ սարեակի վրա։ Տարմահաւը նրա հետ գարնանն էր ծանօթացել, երբ վերջինս մի մեծ ու դեղին ցեց էր որսում։ Նա սարեակի երկար ու բարակ հասակից այնպէս զարնվեց, որ կանգ առաւ և սկսեց սարեակի հետ խօսակցելու։

—Կարո՞ղ եմ քեզ սիրել, ասաց տարմահաւը, որ անքան էլ ձևականութիւնների բարեկամ չէր։ Սարեակը բոլորովին խոնարհվեց նրա առաջ։ Այն ժամանակ տարմահաւը սկսեց թռչկոտել նրա շուրջը, իր թևերով շօշափեց ջուրը, որ յետոյ արծաթեայ ալիքների փոխվեց։ Այդ էր նրա սիրային առաջարկութիւնը, որ մի ամբողջ ամառ տևեց։

—Այդպէս էլ ծիծաղելի համակրութիւն, բամբասում էին միւս տարմահաւերը իրար մէջ։ Նա փող չունի և դրա փոխարէն չափից դուրս շատ ազգականներ։ Եւ յիրաւի, որ մօտակայ գետը սարեակներով բոլորովին լիքն էր, բայց երբ աշունը վրա հասաւ, այն ժամանակ ամենքն էլ ուրիշ տեղեր թռան։

Տարմահաւը իրան բոլորովին միայնակ
զգաց և սկսեց իր սրտի սիրածից հեռզհե-
ռէ ձանձրանալ։

—Նա չէ կարողանում ինձ զբաղեցնել
ասաց տարմահաւը. բացի դրանից ես վա-
խենում եմ, որ նա կօկետ էլ լինի, որով-
հետև քամու հետ միշտ սիրահարութիւններ
է սարքում։ Եւ իսկապէս այդ բանը շա
ճիշտ էր։ Հէնց որ քամին փչում էր, այ
ժամանակ սարեակը սկսում էր իր հրաշա
գեղ շարժումները։ Ես ընդունում եմ, որ նա
լաւ է տրամադրված տնտեսութեան համար,
բայց մի և նոյն ժամանակ ես յաճախակի
ճանապարհորդութիւնների բարեկամ եմ
իսկ դրա համար կինս էլ պէտք է տրամա-
դրված լինի։

—Ուզո՞ւմ ես ինձ հետ գնալ, վերջա-
պէս հարցրեց սարեակին տարմահաւը։ Սա-
րեակը իր գլխով բացասական նշան արեց
որովհետև նա շատ էր կապված իր հայրե-
նի տան օջախի հետ։

Դու ինձ համար միշտ լաւ ես եղել
ասաց տարմահաւը։ Այժմ ես ցանկանում եմ
դէպի պիրամիդները գնալ։ Մնաս բարև։ Ե
տարմահաւը թռաւ։

Գրեթէ ամբողջ օրը թռչում էր նա
մինչև որ գիշեր ժամանակ քաղաք հասաւ
—Որտե՞ղ պէտք է հանգստանամ ես, ա-



սաց նա, բայց կարծեմ քաղաքը դրա համար
արդէն նախապատրաստութիւններ տեսած
կը լինի։

Հէնց այդ ժամանակ տարմահաւը նկա-
տեց բարձր ու բարակ կաթողի վրա գոըն-
վող արձանը։

Ես ցանկանում եմ այնտեղ դադար
առնել, ասաց նա. այդ մի շատ լաւ տեղ է,
այնտեղ թարմ օդի առատութիւն է։

Վերջապէս տարմահաւը բնակութիւն
հաստատեց երջանիկ իշխանի հէնց ոտների
արանքում։

—Ես մի ոսկէ ննջարան ունեմ, ասաց
նա ինքն իրան, երբ իր չորս կողմը դիտեց
և նախապատրաստվեց քնելու։ Բայց հէնց
որ նա ցանկացաւ գլուխը իր թևերի տակ
ծածկել, այն ժամանակ ջրի մի մեծ կաթիլ
նրա վրա ընկաւ։

—Տարօրինակ բան է, բացականչեց
նա, երկնքի վրա ոչ մի կտոր ամպ չը կայ,
աստղերն էլ բոլորովին պարզ ու պայծառ
են, բայց չը նայելով դրան՝ անձրև է գա-
լիս։ Ճշմարիտ որ հիւսիսային Եւրոպայում
կլիման տարօրինակ է։ Սարեակը սիրում
էր անձրևը, բայց այն էլ միայն եսասիրու-
թիւնից։

Այդ ժամանակ ջրի մի երկրորդ կա-
թիլ էլ ցած ընկաւ։

—Էլ ինչո՞ւ համար է արձանը, երբ նա չէ կարող անձրևի առաջն առնել, ասաց տարմահաւը։ Հարկաւոր է մի շատ լաւ ծածկված տեղ գտնել։ Տարմահաւը վճռեց արձանից հեռու թռչել։

Հազիւ էր նա իր թևերը տարածել երբ ջրի մի երրորդ կաթիլ էլ ցած ընկաւ։ Նա վերև նայեց և գիտէ՞ք ինչ տեսաւ։

Երջանիկ իշխանի աչքերը լցվել էին արտասունքներով, որոնք նրա ոսկեայ թշերի վրայով թափվում էին։ Նրա դէմքը լուսնի լոյսի տակ այնպէս գեղեցիկ էր, որ շարժեց փոքրիկ տարմահաւի կարեկցութիւնը։

—Ո՞վ ես դու, հարցրեց նրան տարմահաւը։

—Երջանիկ իշխանն եմ ես։

—Բայց ինչո՞ւ ես լալիս, հարցրեց տարմահաւը. դու քո արտասունքներով ին բոլորովին թրջեցիր։

—Երբ ես դեռ ապրում և մարդկային սրտի տէր էի, պատասխանեց արձանը, չը գիտէի, թէ ինչ են իսկապէս արտասունքները, որովհետև ես ապրում էի Սան-Սուսիի պալատում, որտեղ հոգսու կարիքը մուտք չունեն։ Ես ամբողջ օրը ընկերներիս հետ պարտիզում խաղում էի, իսկ երեկոյեան մեծ դահլիճում կառավարում էի պարերը։ Այդ պարտէզը շրջապատված էր



մի շատ բարձր պարսպով, բայց թէ այն պարողների մէջ ինչ էր գտնվում, իմ մըտքովս անգամ չէր անցնում, որովհետև իմ չորս կողմն ամեն ինչ լաւ և գեղեցիկ էր։ Պալատականներս ինձ երջանիկ իշխան էին համարում և ճշմարիտ որ ես երջանիկ էի, եթէ միայն զուարճութիւնը կարելի է երջանկութիւն համարել։ Այսպէս ապրեցի և մեռայ ես։ Եւ այժմ, երբ ես արդէն մեռել եմ, ինձ մի այնպիսի բարձր տեղ են կանգնեցրել, որտեղից ես քաղաքիս բոլոր թշուառութիւնները և կարիքները կարող եմ տեսնել և չը նայելով որ իմ սիրտը կապարից է շինված, բայց այնուամենայնիւ ես պէտք է լաց լինեմ։

—Ի՞նչ, միթէ նրա սիրտն իսկական ոսկուց չէ, հարցրեց ինքն իրան տարմահաւը. Նա շատ քաղաքավարի է, որ իր մասին բացարձակապէս մի այդպիսի անհատական նկատողութիւն արեց։

—Այստեղից շատ հեռու, շարունակեց ուղված և մելօդիական ձայնով արձանը, մի փոքրիկ փողոցում մի թշուառ տուն է գտնվում։ Լուսամուտներից մէկի միջով, որ բաց է, ես տեսնում եմ մի կնոջ, որ նստած սեղանի մօտ։ Նրա դէմքը նեղ և տառապանքից բոլորովին հիւծված է, ձեռքերը կոպիտ ու կարմիր, ասեղներից ծակծկո-

տած, որովհետև նա կար անող մի կին է։ Նա Թագուհու պատուաւոր և ամենասիրելի կանանցից մէկի համար մետաքսեայ հագուստի վրա չարչարանքի ծաղիկներ է գործում, իսկ այդ հագուստը նա առաջիկա պալատական պարահանդէսի համար է պատրաստել տալիս։ Սենեակի անկիւնում մի անկողնում հիւանդ պառկած է նրա փոքրիկ զաւակը։ Նա տենդում է և շարունակ նարինջներ է խնդրում։ Հիւանդ մանուկի մայրը նրան գետի ջրից աւել ոչինչ չէ կարող տալ, դրա համար էլ մանուկը լաց է լինում. Տարմահաւ, իմ սիրելի և փոքրիկ տարմահա՛ւ, չե՞ս կարող իմ սրի ճարմանդից սուտակը հանել և տանել նրան տալ։ Ինչպէս դու էլ ես տեսնում, ես չեմ կարող շարժվել, որովհետև ոտներս պատուանդանի վրա են ամրացրված։

—Ինձ սպասում են Եգիպտոսում, ասաց տարմահաւը, իմ ընկերները Նեղոսի ափերով այս ու այն կողմերն են թռչում և խօսում լուտոսենիի մեծ ծաղիկների հետ։ Նրանք շուտով կը հանգստանան զօրեղ Թագաւորի շիրիմում։ Թագաւորն ընկած է իր նկարներով զարդարված դագաղում։ Նա դեղին կտաւով փաթաթված և զանազան դեղահիւթերով զմռսված է։ Թագաւորի պարանոցից կախված է դժգոյն և կանաչ նեֆ



րիտեց մի շղթայ, իսկ նրա ձեռքերը թառամած տերևների են նման։

—Տարմահա՛ւ, իմ սիրելի և փոքրիկ տարմահա՛ւ, ասաց իշխանը. չե՞ս ցանկանում մի գիշեր ինձ մօտ մնալ և բանբերս դառնալ։ Այն երեխան այնպէս ծարա՛ւ, իսկ նրա մայրը այնպէս տխո՛ւր է...

—Իմ կարծիքով ես երեխաներից ոչ մի օգուտ չունեմ, պատասխանեց տարմահաւը. երբ ես վերջին ամառս գետի ափունն էի ապրում, երկու անկիրթ երեխաներ, կարծեմ ջրաղացպանի երեխաներն էին, որոնք ինձ միշտ քարկոծում էին։ Այդ քարերը, ի հարկէ, ինձ չէին կպչում, որովհետև առաջին որ մենք տարմահաւերս շատ լաւ ենք թռչում և երկրորդ, որ ես մի այնպիսի ընտանիքից եմ ծագում, որ յայտնի է իր ճարպիկութեամբ։ Ինչ էլ որ լինի, նրանց կողմից այդ քայլը արհամարհանքի նշան էր։

Բայց երջանիկ իշխանն այնպէս էր տխրել, որ շարժեց փոքրիկ տարմահաւի ցաւակցութիւնը։

Այս տեղ շատ ցուրտ է, բայց չը նայելով դրան՝ ես ուզում եմ գիշերը քեզ մօտ մնալ և քո համբաւաբերը դառնալ։

—Շնորհակալ եմ քեզանից, փոքրիկ տարմահաւ, ասաց իշխանը։

Այն ժամանակ տարմահաւը կոցահա-

րեց իշխանի սրից սուտակը և քաղաքի տների տանիքների վրայով թռչելով, կտցի մէջ բռնած, այնտեղ տարաւ սուտակը։ Նա անցաւ եկեղեցու զանգակատան մօտով, որի կողքերին սպիտակ մարմարիոնից հրեշտակներ էին քանդակված։ Տարմահաւն անցաւ նոյնպէս պալատի մօտով և լսեց պարի աղմուկը։ Մի գեղեցիկ օրիորդ իր սիրեկանի հետ պատշգամբն էր դուրս եկել։

—Ինչ հրաշալի՜ են աստղերը և ինչպէս սքանչելի՜ է սիրոյ ոյժը, ասում էր սիրեկանը իր սիրուհուն։ Յուսով, եմ, որ պալատական պարահանդէսի համար առանձնապէս պատուիրած զգեստս ժամանակին կը վերջացնեն, ասում էր օրիորդը։ Ես պատուիրել եմ այդ նոր զգեստի վրա չարչարանքի ծաղիկներ գործել. բայց ինչ անփոյթ կանայք են այդ կար անող արարածները։

Տարմահաւը թռաւ գետի վրայով և նկատեց նաւերի կայմերից կախված լապտերները։ Նա անցաւ հրէական թաղը (Ghetto) և տեսաւ շատ ծերունի հրէաներ, որոնք միմեանց հետ սակարկում և պղնձեայ նժարներում փողը կշռում էին։ Վերջապէս նա հասաւ և կարիքի տունը և ներս նայեց։ Մանուկը տենդով հիւանդ պառկած էր իր անկողնում, իսկ նրա մայրը յոգնածութիւ-



նից քնով էր անցել։ Տարմահաւը ներս ցատկեց և մեծ սուտակը դրեց սեղանի վրա՝ կնոջ մատանու կողքին։ Յետոյ նա սկսեց հանդարտ կերպով թռչկոտել մանուկի անկողնի շուրջը և իր թևերով հովհարեց նրա ճակատը։

—Ի՜նչ լաւ հով է, կարծեմ այժմ ես լաւանում եմ, ասաց մանուկը և ընկաւ թարմացնող՝ նինջի մէջ։

Դրանից յետոյ տարմահաւը վերադարձաւ երջանիկ իշխանի մօտ և իր բոլոր արածը պատմեց նրան։

—Զարմանալի է, ասաց տարմահաւը, որ ես ինձ այժմ բաւական տաք եմ զգում, չը նայելով, որ բաւական ցուրտ է։

—Այդ նրանից է, որ դու մի բարի գործ կատարեցիր, ասաց իշխանը։ Անուհետև իշխանը մտածմունքի մէջ ընկաւ և յետոյ քնեց։ Մտածելը նրան միշտ քնեցնում էր։

Տարմահաւը լուսաբացին թռաւ գետի ափն և այնտեղ լողացաւ։

—Զարմանալի երևոյթ է, ասաց հաւաբանութեան ուսուցչապետը, երբ նա գետի կամրջով պատահմամբ անցնում էր։ Ձմեռ և տարմահաւ։ Այդ երևոյթը նկատելուց յետոյ նա տեղական լրագիրներից մէկին մի ապահովեալ թղթակցութիւն ուղարկեց։ Ա-

մենքը խօսում էին դրա մասին, որովհետ[և] այդ թղթակցութեան մէջ շատ խօսքեր կային, որ նրանք չէին կարողանում հասկանալ։

—Այսօր երեկոյեան ես գնում եմ Եգիպտոս, ասաց տարմահաւը և ընկաւ լա[ւ] տրամադրութեան մէջ։ Նա այցելեց քաղաքի հասարակական բոլոր արձաններին և երկար ժամանակ նստեց եկեղեցու աշտարակի վրա։ Ամենուրեք, որտեղ մեր տարմահաւն էր այցելում, ճուողում էին ճընճղուկները և ասում միմեանց. «ինչ նշանաւո՞ր օտարական է»։ Եւ այդ բանը տարմահաւին մեծ բաւականութիւն էր պատճառում։ Հէնց որ լուսինը մայր մտաւ, տարմահաւը թռաւ երջանիկ իշխանի մօտ։

—Եգիպտոսի համար բան չունե՞ս պատուիրելու, հարցրեց նա. ես իսկոյն գնում եմ։

—Տարմահա՛ւ, իմ սիրելի և փոքրի[կ] տարմահա՛ւ, ասաց իշխանը, չե՞ս ցանկանա[լ] մի գիշեր էլ ինձ մօտ մնալու։

—Ինձ սպասում են Եգիպտոսում, պատասխանեց տարմահաւը, առաւօտեան ընկերներս դէպի երկրորդ Ջրվէժը կը թռչեն. Գետաձին արդէն որոճում է եղեգնուտում, իսկ Մեմնոն աստուածը նստած է գրանիտեայ մեծ գահի վրա։ Նա ամբողջ գիշեր[…]



դիտում է աստղերը և հէնց որ առաւօտեան աստղը երևում է, ուրախութեան ճիչ է արձակում և կրկին լռում։ Կէսօրից յետոյ դեղին առիւծները գալիս են գետափը ջուր խմելու։ Նրանք կանաչկապտագոյն քարի պէս աչքեր ունեն և ջրվէժից աւելի բարձըր են ոռնում։

—Տարմահա՛ւ, իմ սիրելի և փոքրիկ տարմահա՛ւ, ասաց իշխանը, այստեղից շատ հեռու, քաղաքի տների տանիքաւոր սենեակներից մէկում, մի երիտասարդ մարդ եմ տեսնում, որ յենվել է գրքերով ծածկված մի գրասեղանի վրա։ Նրա մօտ գտնվող ջրամանում թառամած մանուշակների մի փունջ կայ։ Այդ երիտասարդի մազերը գորշ և ալիքաձև են, շրթունքները նուռն պէս կարմիր, իսկ աչքերը մեծ և կրքոտ։ Նա սիրով ցանկանում է իր թատրոնական գըրուածքը վերջացնել, բայց դժբախտաբար ցրտի պատճառով չէ կարողանում գրել։ Նրա բուխարում կրակ չը կայ և բացի դրանից նա սովածութիւնից թուլացել է։

—Ես մի գիշեր էլ կը մնամ քեզ մօտ, ասաց տարմահաւը, որ իսկապէս բարի սիրտ ունէր։ Եթէ ցանկանում ես, նրա համար էլ միւս սուտակ կը տանեմ։

Ախ ափսո՜ս։ Ես այլ ևս սուտակ չունեմ, ունեցած չունեցածս միայն աչքերս են։

Նրանք հազուագիւտ շափիւղից են շինվա
և հազարաւոր տարիներ առաջ Հնդկաստա
նից բերված։ Հանիր դրանցից մէկը և տա
նրան տուր։ Երիտասարդը կարող է այ
շափիւղն ակնավաճառին ծախել, դրանով ի
համար սնունդ ու վառելիք գնել և այդպ
սով իր աշխատութիւնը վերջացնել։

—Ես չեմ կարող այդ բանը անել, սի
րելի իշխան, ասաց տարմահաւը և սկսե
լաց լինել։

—Տարմահա՛ւ, իմ սիրելի և փոքրի
տարմահաւ, ասաց իշխանը, արա՛ այնպէ
ինչպէս որ ես եմ քեզ պատուիրում։

Տարմահաւը հանեց իշխանի աչքը
թռաւ դէպի ուսանողի տանիքաւոր սենեա
կը։ Նա տանիքի ծակով հեշտութեամբ ներ
մտաւ սենեակը։ Երիտասարդը գլուխը խո
րասուզել էր իր ձեռքերի մէջ և հէնց դրա
համար էլ չը լսեց տարմահաւի թևերի առա
ջացրած ձայնը։ Երբ նա նկատեց թռչնին
նրա աչքին ընկաւ թառամած մանուշակ
վրա դրված գեղեցիկ շափիւղը։

—Ես հետզհետէ նշանաւոր մարդ ե
դառնում, բացականչեց գրողը, ինչպէս ե
րևում է այդ շափիւղը իմ հայրենակիցնե
րից որ և է մէկն է ինձ համար ուղարկել։
Այժմ միայն կարող եմ ես աշխատութիւնս



վերջացնել։ Մի խօսքով երիտասարդը իրան շատ բախտաւոր էր զգում։

Հետևեալ օրը տարմահաւը թռաւ դէպի նաւահանգիստը։ Նա նստեց մի մեծ շոգենաւի կայմի վրա և դիտեց այնտեղի նաւաստիներին, որոնք շղթայաւոր թոկերով ծանր բեռները բարձրացնում և դուրս էին հանում։ «Հօ՛յ, հօ՛յ», գոռում էին նրանք ամեն անգամ, երբ մի կապոց էին հանում։ Երբ լուսինը մայր մտաւ, տարմահաւը թռաւ երջանիկ իշխանի մօտ։

—Ես ուզում եմ քեզ մնաս բարեւ ասել, ասաց տարմահաւը։

—Տարմահա՛ւ, իմ սիրելի և փոքրիկ տարմահաւ, ասաց իշխանը, արդեօք չէ՞իր ցանկանալ մի գիշեր էլ ինձ մօտ մնալ։

—Արդէն ձմեռ է և գետինը շուտով ձիւնով կը ծածկվի, պատասխանեց տարմահաւը։ Արեգակը Եգիպտոսում արդէն տաքացել է կանաչ արմաւենիների վրա, իսկ կոկորդիլոսները տիղմի մէջ խրված նայում են իրանց չորս կողմը։ Ընկերներս Բահաղի տաճարում իրանց բներն են շինում, իսկ կարմրաւուն և սպիտակ աղաւնիները նրանց նայում և կռկռում են։ Այժմ, սիրելի իշխան, ես պէտք է քեզ հրաժեշտ տամ, բայց և մի և նոյն ժամանակ խոստանում եմ քեզ երբէք չը մոռանալ։ Բացի դրանից

Հետևեալ գարնան ես քեզ համար կը բերե
ամենագեղեցիկ և թանգագին քարեր, որոն
գի դրանց դու ընծայես այն մարդկանց, ո
րոնց միշտ և սովորաբար ընծայել ես։ Սո
տակը կարմիր վարդից աւելի կարմիր կ
լինի, իսկ շափիւղը այնպէս կապոյտ, ին
պէս որ մեծ ծովն է։

—Այնտեղ ներքևում, բաց հրապարակ
վրա լուցկի վաճառող մի փոքրիկ աղջիկ
է կանգնած, ասաց երջանիկ իշխանը։ Ն
իր բոլոր լուցկիները փողոցի առուն է ձգ
և փչացրել։ Աղջկայ հայրը կը ծեծի նրա
եթէ նա առանց փողի տուն գնայ, դրա հա
մար էլ նա լալիս է։ Այդ աղջիկը ոչ գու
պա և ոչ էլ կօշիկ ունի, իսկ գլուխն էլ բ
լորովին բաց է։ Հանիր իմ միւս աչքը
տար նրան հասցրու, որովհետև խեղճ աղջ
կը միայն դրանով կարող է իր հօր ծեծի
ազատվել։

—Ես մի գիշեր էլ կը մնամ քեզ մօտ
ասաց տարմահաւը, բայց չեմ կարող աչք
հանել, որովհետև դու այն ժամանակ բոլո
րովին կը կուրանաս։

—Տարմահա՛ւ, իմ սիրելի և փոքրի
տարմահա՛ւ, արա այնպէս, ինչպէս ես և
քեզ խնդրում, ասաց իշխանը։

—Տարմահաւը հանեց իշխանի միւ
աչքը և թռաւ։ Նա մօտեցաւ լուցկիներ վա



ճառող աղջկան և ազնիւ քարը ձգեց նրա
տարածած ձեռքի վրա։

—Ինչ սքանչելի ապակեայ կտոր է,
բացականչեց փոքրիկ աղջիկը և ծիծաղելով
վազեց տուն։

Դրանից յետոյ տարմահաւը վերադար-
ձաւ իշխանի մօտ։ Այժմ դու կոյր ես և հէնց
դրա համար ես ուզում եմ միշտ քեզ մօտ
մնալ։

—Իմ փոքրիկ տարմահաւ, ասաց խեղճ
իշխանը, դու պէտք է Եգիպտոս գնաս։

—Ո՛չ, ես ուզում եմ միշտ քեզ մօտ
մնալ, պատասխանեց տարմահաւը և քնեց
իշխանի ոտների մօտ։

Հետևեալ ամբողջ օրը նա նստեց իշ-
խանի ուսի վրա և նրան պատմեց օտար եր-
կիրներում իր հետ պատահած բոլոր արկած-
ները։ Նա իշխանին պատմեց կարմիր քա-
ջահաւերի մասին, որոնք երկար երամներով
Նեղոսի ափերում կանգնում և իրանց կը-
տուցներով ոսկէ ձկներ են բռնում։ Պատմեց
սֆինկսի մասին, որ այնքան հին է, որքան
և աշխարհս և անապատում ապրելով ամեն
բան գիտէ։ Նա յիշեց այն վաճառականնե-
րին, որոնք իրանց ուղտերով դանդաղ կեր-
պով թափառում են և ձեռներին սաթեայ
մարգարիտներ ունեն։ Բացի դրանից տար-
մահաւը շեշտեց լուսնի լեռների թագաւորի

վրա, որ եբենոսի փայտի պէս սև է և մ
մեծ բիւրեղի է երկրպագում։ Նա պատմե
կանաչ ու փիթխարի օձի մասին, որ մի ար-
մաւենու մէջ քնում և կերակրվում է քահ
հոգևորականների ձեռքով մեղրից պատրաս-
տված քաղցրաւենիներով։ Տարմահաւը չ
մոռացաւ և այն թզուկներին, որոնք մեծ
հարթ տերևների վրա նստած լայն ծովի վը-
րա թիավարում և թիթեռնիկների հետ միշ
կռիւ են մղում։

—Իմ սիրելի և փոքրիկ տարմահա
ասաց իշխանը, դու ինձ զարմանալի ար-
կածներ ես պատմում, բայց աւելի զարմա-
նալի են մարդկանց և կանանց ցաւերը։ Աղ-
քատութիւնը մարդուս ուժասպառ է անում.
Թռի՛ր իմ քաղաքի վրայով, փոքրիկ տար-
մահա՛ւ, և պատմիր ինձ այն բոլորը, ինչ ո
կը տեսնես։

Այնուհետև թռաւ տարմահաւը մեծ քա-
ղաքի վրայով և տեսաւ հարուստներին, ո-
րոնք իրանց գեղեցիկ տներում լաւ ապրու
էին, այն ինչ մուրացկանները դռների մօ
էին նստած։ Նա թռաւ մութ ու նեղ փողոց-
ներով և տեսաւ սովից մեռնող մանուկների
գունատ դէմքերը, որոնք անխօս ու անշարժ
բարացել էին սև փողոցներում։ Մի կամուր-
ջի կամարի տակ ձեռք ձեռքի տուած ընկե
էին երկու փոքրիկ երեխաներ և աշխատու



էին միմեանց տաքացնել։ «Ի՞նչպէս սոված ենք մենք», ասացին նրանք։ «Դուք իրաւունք չունիք այդտեղ պառկելու», գոռաց նրաց վրա պահապանը և նրանք ստիպված եղան անձրևի տակ դուրս գալու։

Այնուհետև տարմահաւը վերադարձաւ և իշխանին պատմեց իր բոլոր տեսածները։

—Ես ծածկված եմ նուրբ ոսկով, ասաց իշխանը, վերցրու շերտ շերտ այդ բոլորը և բաժանիր իմ աղքատներին։ Կենդանի մարդիկ միշտ կարծում են, իբր թէ ոսկին նրանց կարող է երջանկացնել։

Շերտ շերտ պոկեց տարմահաւը նուրբ ոսկին, մինչ որ երջանիկ իշխանը բոլորովին մռայլվեց և տխրեց։ Նա տարաւ այդ շերտերը մէկ մէկ բաժանեց աղքատներին, երեխաների դէմքերը վարդագոյն դարձան, նրանք սկսեցին ծիծաղել և խաղալ փողոցներում։ Այժմ հաց ունենք, աղաղակեցին նրանք։

Ձիւնը եկաւ, իսկ նրանից յետոյ վրա հասաւ սառնամանիքը։ Քաղաքի փողոցները արծաթի պէս փայլում էին։ Տների տանիքների կաթիլներից գոյացած սառցէ ձները բիւրեղեայ դաշոյնների նման կախվել էին։ Ամեն մարդ փաթաթվել էր մուշտակով, իսկ փոքրիկ մանուկները շիկակարմիր գդլխարկներով սառոյցի վրա իրանց սահնակ-

նրով սահում էին։ Խեղճ փոքրիկ տարմահաւը հեռվհեռէ աւելի էր մրսում, բայց չէր ուզում իշխանից հեռանալ, որովհետև նրան շատ էր սիրում։ Նա հացթուխի դռան առաջ միշտ հացի փշրանքներ էր կտցահարում, երբ ոէրը նրան չէր նայում և որպէսզի տաքանայ, միշտ թափահարում էր թևերը։ Նա դեռ բաւական ույժ ունէր մի անգամ էլ իշխանի ուսերի վրա թռչելու։

—Մնաս բարեաւ, սիրելի իշխան, փափսաց տարմահաւը, արդեօք կարող եմ ձեռքդ համբուրել։

—Ուրախ եմ, որ դու վերջապէս Եգիպտոս ես գնում, փոքրիկ տարմահաւ, ասաց իշխանը, դու այստեղ երկար մնացիր, այժմ համբուրիր շրթունքներս, որովհետև ես քեզ սիրում եմ։

—Ես չեմ գնում Եգիպտոս, պատասխանեց տարմահաւը, այլ մահվան տունը։ Մահը քնի եղբայրն է, այնպէս չէ՞։

Նա համբուրեց երջանիկ իշխանի շըրթունքները և մեռած ընկաւ նրա ոտների տակ։ Այդ րոպէին արձանի ներսում լսվեց մի ճայթոց, կարծես թէ մի բան կոտրվեց։ Հաստատ էր, որ կապարեայ սիրտը երկու կտոր էր դարձել։ Ինչպէս երևում է այդ ձմեռը, յիրաւի որ, սարսափելի դաժան էր եղել։



Հետևեալ առաւօտեան, վաղ, քաղաքագլուխը քաղաքային մի քանի ձայնաւորների ուղեկցութեամբ զբօսնում էր քաղաքի հրապարակում։ Երբ նա կոթողի մօտով անցաւ, նայեց արձանին և ասաց. «Տէր Աստուած, այս ինչ ողորմելի կերպարանք է ստացել երջանիկ իշխանը»։

—Ճիշդ որ շատ ողորմելի է, բացականչեցին ձայնաւորները, որոնք միշտ սիրում էին քաղաքագլխի կարծիքին հետևել։ Դրանից յետոյ նրանք մի տեղ բարձրացան արձանը ամբողջովին դիտելու։

Նրա սրից անյայտացել է սուտակը, աչքերը հանել են, իսկ ոսկին էլ չը կայ, ասաց քաղաքագլուխը։ Ճիշդ եմ ասում, որ նա մի մուրացկանից հազիւ է լաւ երևում։

—Մուրացկանից հազիւ թէ լաւ է երևում, կրկնեցին քաղաքային ձայնաւորները։

—Նրա ոտների տակ էլ մի մեռած թըռչուն է ընկած, շարունակեց քաղաքագլուխը։ Մենք պէտք է մի առանձին յօդուած հրատարակենք, որ թռչուններին արգելված է այստեղ մեռնելու։

Քաղաքային վարչութեան քարտուղարն այդ կէտը մտցրեց արձանագրութեան մէջ։

Այնուհետև երջանիկ իշխանի արձանը հիմնայատակ քանդեցին։

—Որովհետև նա այլ ևս գեղեցիկ չէ,

հետևապէս և անօգտակար է, ասում էր հա
մալսարանի գեղարուեստի ուսուցչապետը:
Դրանից յետոյ արձանը մի ձուլարա
նում հալեցին և քաղաքագլուխը քաղաքայ
ձայնաւորների մի ժողով գումարեց խորհր
դակցելու, թէ ինչ պէտք է անեն մետաղ
—Ի հարկէ պէտք է մի նոր արձ
շինենք, ասաց նա, և այն էլ իմ արձանը:
—Ո՛չ, իմ արձանը, ասաց ձայնաւոր
ներից իւրաքանչիւրը, որից յետոյ նրան
մէջ դրա մասին ահագին վէճ ծագեց:
Երբ ես նրանց վերջին անգամ լսեցի
նրանք դեռ վիճում էին միմեանց հետ:
—Ի՞նչ տարօրինակ բան է, ասաց ձո
լարանի վարպետը, կապարեայ կոտրվա
սիրտը ձուլարանում չէ ուզում ձուլվել: Ն
րանք այդ ձգեցին այն աղբակոյտի մէջ, ո
տեղ ընկած էր և մեռած տարմահաւը:
—Բե՛ր ինձ համար քաղաքում գտնվա
ամենաթանգագին իրերից երկուսը, աս
Աստուած իր հրեշտակներից մէկին: Հրեշ
տակը Աստուծու համար բերեց կապարեա
սիրտը և մեռած թռչունը:
—Դուք ընտրեցիք ամենալաւը, աս
Աստուած: Հէնց դրա համար էլ այդ փոքրի
թռչունը միշտ պէտք է երգէ իմ դրախտա
յին պարտիզում, իսկ երջանիկ իշխանը ի
ոսկեայ քաղաքում ինձ փառաբանէ ու գո
վարանէ:

---

ԹԱՐԳՄԱՆՉԻ ԱՌԱՆՁԻՆ ԳՐՔԵՐՈՎ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. *Ջիովաննի Վերգա*—ԳԻՒՂԱԿԱՆ ԱՍՊԵՏՈՒԹԻՒՆ (*պատկ. Իտալիայի ժող. կեանքից*) 15 *կ.*
2. *Մաքս Նորդաու* — ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԻՏԱԼԱՑԻՆ. . . . . . 10 *կ.*
3. Մ. Հ.—ՍԻՍՏԵՄ և Օ. Վ.—ԵՐՋԱՆԻԿ ԻՇԽԱՆԸ. . . . . . 15 *կ.*

---

Դիմել՝ Թիֆլիս, «Գուտտենբերգ» գրախանութին.

*Գինն է 15 կոպ.*